



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ
ՊԱՏՐԻԱՐԲ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ամայն վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Ս. Օծուրյուն Ս. Ս. Մելփիսեղեկ Գ-ի եղբայրական հրավերով, 1957 թվականի հուլիսի 6-11 օրերին Թբիլիսի հովվապետական այցելություն տվեց Ամենայն Հայոց Մայրազույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծուրյուն Ս. Ս. վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, արժանանալով արտագին և ջերմ բնորոնելության, հյուրը լինելով վրաց Եկեղեցու և Համայն վրաց Պատրիարք-Կաթողիկոս Մելփիսեղեկ Գ-ի:

Պատմական այդ այցելությամբ է՛լ ավելի բնդայնվեց և խորացավ հայ և վրաց ժողովուրդների, Հայ և վրաց Եկեղեցիների հարաբերությունը՝ եկեղեցական և հայրենական երկու մեծ ղեկավարների անձնական հանդիպումով և մտերիմ հարաբերությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Թբիլիսի Համայն վրաց Կաթողիկոսին՝ հանդիսացավ հարևան երկու ժողովուրդների դարավոր բարեկամության վառ արտահայտությունն ու վկայությունը:

Ամենայն Հայոց Հայրապետը Թբիլիսի եր հովվապետական այցելության ժամանակ, ամեն տեղ դիմավորվում էր մեծ սիրալիրությամբ, ջերմությամբ և բերկրանքով:

Հազարամյակների պատմություն ունի հայ և վրաց ժողովուրդների բարեկամու-

րյունը: Այն օրվանից, երբ հայ ժողովուրդը պատմության ասպարեզ է իջել, նա իր կողմից տեսել է իր հարևան ու եղբայրակից վրաց ժողովուրդին: Դարեր շարունակ կերտվել և ամրապնդվել են հայ և վրաց ժողովուրդների կապերը, բարեկամությունն ու բարի դրացնությունը: Երկար դարերով նրանք բախտակից են եղել իրենց ուրախ և դժբախտ օրերին, ապրել են կողմ-կողմի, տխրել միմյանց վշտերով, ուրախացել միմյանց հաջողություններով: Ավանդական դարերից հայ և վրաց ժողովուրդները միասին են ֆայլել «Իրար ձուլած վահան ու տեգ, խառնած արյուն ու ֆրախիք»: «Հայերն ու վրացիները արյունակից եղբայրներ են, ավելի քան 2000 տարվա բարեկամությամբ կապված եղբայրներ, վշտով և հևությամբ արբազործված», — գրել է Վարպետը՝ Ա. Իսահակյանը: Մեր անմահ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որ ջերմ պաշտպաններից մեկն էր հայ և վրաց ժողովուրդների հարաբերության և իր հոգու բովանդակ ջերմությամբ սիրում է՝ վրաստանը և վրացական գրականությունն ու ժողովուրդը, հետևյալ ստառուչ խոսքերով է բնութագրել հայ և վրացական հարաբերությունները. «... էն երկու ժողովուրդները, որոնք իրենց պատմությունն սկսում են նրանով, թե Հայկոսը (Հայկը) և Քարթլոսը եղբայրներ

էին, մնացել են ու մնում են անասան՝ կապված իրենց փոքորկայից պատմական նակատագրով և մեծագույն հիշատակներով: Նրանք միաժամանակ են հնարել իրենց գիրք, միաժամանակ են ընդունել քրիստոնեությունը, միասին մշակել թե՛ հոգևոր թե՛ աշխարհիկ գրականությունն ու գիտությունը, միասին կովել իրենց ազատության և մշակույթի համար և միասին նույնիսկ իրենց մեծ տառապանքների մեջ ու միշտ բախտակից»:

Հարուստ է երկու ժողովուրդների բազմադարյան պատմությունը հանուն ազատության, հանուն Հայրենիքի և ժողովրդի երջանկության, հանուն Անդրկովկասի անկախության միասնաբար մղված մարտերի հերոսական դրվագներով: Նրանք միասին են կովել հոռմեական լեզուներին և արծիվների դեմ: Պարսկական բռնակալության դեմ մղված վարդաբանց հերոսական պատերազմում, «Բդեշխն Աշուշայ և այլ տանուտեարք [վրաց] առնէին ուխտադրութիւնս և բազում եղմամբ Աւետարանին հաստատէին» (Փարսպեցի): Արաբական խալիֆայության դեմ պայքարում միշտ հանդես է եկել հայ և վրաց ժողովուրդների կուռ միասնությունը: ԺԳ դարում հայ և վրաց զորքերը ուսուսի տված կովել են սելջուկյան բուրքերի դեմ, ինչպես նաև Դավիթ Բեկի օրերին՝ ԺԸ դարում Պարսկաստանի և օսմանցիների դեմ:

Շատ փոքորիկներ են անցել գեղեցիկ վրաստանի գեղածիծաղ երկնքի վրայով, բայց անընկենյի է մնացել միշտ վրացական ազատասեր ոգին:

Դեղեցիկ է վրաստանը և նրա սիրուն մայրաքաղաք Թբիլիսին:

Թբիլիսիի մասին հիացմունքով է խոսել մեր պատմիչներից Մովսես Կաղանկատվացին, այն անվանելով «փափկասուն, վաճառաշահ, հոշակատու մեծ մայրաքաղաք» («Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912 թ.):

Ժ դարի մի այլ պատմիչ՝ Ուխտանես Եպիսկոպոս, նմանապես հիացմունքով է խոսում Թբիլիսիի մասին. «Տիրաշաշէն և հրաշալի, նոշակավոր և սկանաւոր մեծի մայրա-

քաղաքին Տփլիսեաց» («Պատմութիւն հայոց», Բ հատված, էջ 34, Վաղարշապատ, 1874 թ.):

Թբիլիսիի մասին մեծ հիացմունքով են խոսել նաև վրաստան այցելած ճանապարհորդներ: «Վրաստանում կա մի գեղեցիկ քաղաք, շրջապատված արվարձաններով և բազմաթիվ ամրություններով», — գրել է նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն:

Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը 1672 թվականին Թբիլիսի այցելելիս իր հուշերում գրում է, որ Թբիլիսին «Մերձավոր Արևելքի ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է»:

Վրաց ժողովուրդը աշխարհի հին և արժեքավոր մշակույթի տեր ժողովուրդներից մեկն է, տաղանդավոր, աշխատասեր, կենսուրախ և միշտ երիտասարդ: Վնիս ու պայծառ է վրաց ժողովրդի հոգին, վրաստանի գեղատեսիլ և գունագեղ բնության նման՝ գեղեցիկ, կայտառ, կենսահորդ: Դեռ 12-րդ դարում, վրաց գրականության փառք և մեծ հանճար Շոքա Ռուսթավելին հնչեցրել է ժողովուրդների եղբայրության, խաղաղության մեծ գաղափարներ: Մեծ բանաստեղծի և հումանիստի խոհերով և զգացմունքներով է դաստիարակվել վրաց ժողովուրդը: Համաշխարհային գրականության ոսկյա ֆոնդում իր պատվավոր տեղն է գրավում վրաց գրականությունը: Վրաց ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում գուրգուրանելով, խնամելով և իր աչքի լույսի պես է պահել իր մշակույթը, լեզուն, գրականությունը, ազգային մեծ ավանդությունները, հոգեկան իր նվաճումները, իր անկրկնելի գանձերը:

Խորունկ և սերտ է եղել նաև հայ և վրաց ժողովուրդների մշակութային կապը: Հայերի և վրացիների մշակութային-գրական կապը, մտքի եղբայրությունն ու համագործակցությունը գրականության և արվեստի ասպարեզում քարձրանում է միևնույն թ դար (մ. թ. ա.): Վրացերենից հայերենի և հայերենից վրացերենի են քարգմանվել երկու գրականությունների լավագույն նմուշները: Հայ և վրաց գրականության մերձեցումը մի հզոր ազդակ է հանդիսացել երկու երկրների՝ Հայաստանի և վրաստանի և երկու ժողովուրդների՝ հայերի և վրացիների՝ եղ-

բայրացման և ազգային մշակույթի ծաղկման: «Անմահ Շոքա Ռուսավելիի և Գրիգոր Նարեկացիի այն բարձրագույն հուշարձաններն են, որ ավել է կովկասի գրականությունը» (Ն. Ման): Սասունցի Դավիթ Հայկական էպոսը և վրացական Ամիրան Դարեշանիանի էպոսը այնքան մոտ են միմյանց իրենց ոգով, գաղափարական բովանդակությամբ և գեղարվեստական առանձնահատկություններով: Վրաց գրականությունը առգորված է եղել հայրենիքի և ժողովրդի սիրով, հայրենի երկրի հերոսական անցյալով և ապագայի վառ երազով, ազատասիրությամբ, հումանիզմով:

Մեր ժողովուրդը, մեր գրողները մեծ սիրով են երգել «գեղեցիկ և արյունակից արեվամայր» վրաստանը, նրա «արծիվների օրորոց սեզ լեռները», նրա «որդիների ըմբոստ ոգին» և «եղբայրասեր ֆաշարի ժողովրդին»: Հայ ժողովուրդը սիրել և զնահատել է անզուգական Շոքայի սփանշելի լեզվով գրված գրականությունը» (Ա. Խահակյան) և «քանկագին վրաստանն ու վրացական սփանշելի հոգին, նույնքան էլ քանկագին այն մարդկանց, որոնք հանդիսանում են կրողներն ու մեկնաբանները այդ հոգու» (Հ. Թումանյան, «Թումանյանը ֆենադատ», էջ 490):

Սայաթ-Նովան, Գ. Սունդուկյանն և ուրիշ հայ գրողները որքան հարազատ են եղել հայերին, այնքան և վրաց ժողովրդին: Մշակույթի և գրականության ասպարեզում «հայ և վրաց ժողովուրդները դարերի սկզբներից՝ միֆական Մհեր—Ամիրանի շրջաններից, եղել են ուղեկիցներ, գործակիցներ: Միասին կերտել են, յուրաքանչյուրը պահելով իր ինքնատիպությունը, այդ փառավոր, գարմանայի կույտուրան, որ բովանդակ Սովետական Միության կույտուրայի ամենահինն է անվերապահորեն վկայված» (Ա. Խահակյան):

Արաֆս և Կուր գետերի մի հարթավայրից սկիզբ առնելը, հետագայում կողք-կողքի եղբայրաբար հոսելը և վերջում միանալը ծովի մեջ քափվելու համար՝ հայ և վրացի մեր բազմաթիվ գրողների համար հանդիսացել է իրապես մի կենդանի խորհրդանշան երկու հարևան ժողովուրդների պատմական

նակատարի և մշակույթի զարգացման համար:

Հին է, շատ հին նաև հայ և վրաց եկեղեցիների փոխհարաբերության պատմությունը:

Վրաստանում Բրիտանեոսյան մտաֆն ու ֆարոգությունը պատմականորեն կապվում է Հոնիսիմյանց կույսերի խմբից Նունե կույսի Վրաստանում առաքելության և ֆարոգության հետ՝ վրաց Միհրան բղեշխի ժամանակ, Մցխեթա մայրաֆաղաֆում: Վրաստանում Բրիտանեոսյան տարածման և պետական կրոն հռչակման աշխատանքներում Միհրան բղեշխը կատարում է այն պատմական ու վեոական դերը, ինչ Հայաստանում կատարել են Տրդատ Գ քազավորը և Գրիգոր Լուսավորիչը:

Վրաստանում Նունե կույսի առաքելությամբ, «յօժարութեամբ ընկալան Վիրք զֆարոգութիւնն Աւետարանին» (Խորենացի, «Պատմութիւն հայոց», Վեներտիկ, 1865 թ., էջ 170):

«Անդստին Լուսավորչի օրեն,— գրում է Մաղաֆիա արքեպիսկոպոս Օրմանյանը («Ազգապատում», Ա հատոր, էջ 104),— ներֆին միավորություն մը հաստատված էր Հայոց և Վրաց եկեղեցիներու մեջ»: Վրաց եկեղեցին և եկեղեցականները դավանաբանական հարցերում «հայոց կենտին և հայոց ժողովներուն կմասնակցին իբրև նույն եկեղեցվո անդամներ» («Ազգապատում», Ա հատոր, էջ 588), ինչպես Քաբգեն կաթողիկոսի օրով 506 թվականին Դվինի առաջին ժողովում, ուր ներկա էր վրաց Գաբրիել կաթողիկոսը 23 վրացի եպիսկոպոսներով: Երկու եկեղեցիների դավանաբանական պաշտոնական գրությունները մինչև 608 թվականը գրել են հայ կաթողիկոսները «Վրաց և Աղվանից միասնութեամբ» («Գիրք բղրոց»): 608 թվականին վրաց Կյուրիոն կաթողիկոսը «Վրաց եկեղեցին Հայոց եկեղեցիեն զատեց, և Եփեսոսական միաբնակ վարդապետութենեն ֆաղկեղոնական երկարնակ վարդապետության վերածեց» («Ազգապատում», Ա հատոր, էջ 589):

Այնուամենայնիվ երկու եկեղեցիների միջև շարունակվեց Բրիտանեական ոգու և սիրո վրա հիմնված սերտ համագործակցություն.

որը վերջերս Գևորգ Զ-ի և Վրաց Կալիստրատ Կաթողիկոսի ժամանակ վերածվեց սրտագին համագործակցության և եղբայրության:

Խորապես վստահ եեմ և համոզված, որ Ամենայն Հայոց Հայրապետի պատմական այցելությունը Քրիիսի՝ մի էոր ու խոստումնալից էջ կբացի ինչպես ընդհանրապես հայ և վրաց ժողովուրդների, և ի մասնավորի Հայ և Վրաց Եկեղեցիների բարեկամական հարաբերությունների պատմության մեջ:

Վերջին երեսնամյակում, Վրաստանում սովետական կարգերի հաստատումով, Վրաստանը հասավ իր մշակույթի, արդյունաբերության, գյուղատնտեսության աննախընթաց ծաղկման: Վրաստանի ժողովրդական տնտեսության բուռն ծաղկման հետ զուգընթաց անել են էոր գեղեցկությամբ և մի խոսամնալից փքրումով՝ Վրաստանի էոր մշակույթը, գիտությունը, արվեստները, գրականությունը: Վրաստանի Ակադեմիայումն է կենտրոնացել վրացական ողջ ստեղծագործ, որոնող միտքը: Գեղեցիկ Վրաստանում ծաղկել են մեկը մյուսից սիրուն գմրուխտ կանաչների մեջ քաղված գյուղեր, ավաններ, քաղաքներ, երկիրը ծածկվել է հագարավոր արդյունաբերական, գրադարանային, ուսումնական-լուսավորական հաստատությունների, հիվանդանոցների, մանկամսուրների ցանցով: Եվ այս բոլորը՝ ի սպաս է դրված վրաց ժողովրդի երջանիկ ապագայի ու ազատ կյանքի համար:

Օրերի հետ միասին անում է և ամրապնդվում հայ և վրաց ժողովուրդների դարա-

վոր ու մեծ բարեկամությունը: Այսօր ավելի քան երբևէ անհակտեյի եղբայրությամբ են միացած հայ և վրաց ժողովուրդները:

«Կուրի չուր խմես, մերը կլինես».—սուտ է վրացական առածը: Կուր գետի ջրից շատ է խմել հայ ժողովուրդը: Նա անխորտակելի կապերով, սրտագին ավանդություններով, հերոսությամբ և պատմությամբ, իր անցյալով, ներկայով և ապագայով սերտորեն կապված է Վրաստանին և վրաց ժողովրդին, ու կապված կմնա, ու չկա, չի եղել ու չի լինի մի ուժ, որը կարողանա բաժանել հայ սրտերը վրացական սրտերից:

Ամենայն Հայոց Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի Քրիիսի կատարած այս հանդիսավոր ու պատմական այցելության անթիվ, բովանդակ հայ ժողովուրդը և նրա հետ Մայր Աթոռ Ս. էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը, ամբողջ հոգով ցանկանում են ՎՐԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ՝ հոգևոր-ազգային վերագարքոնք, ՎՐԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ՝ նորանոր հաջողություններ՝ փայլուն էոր էջեր ավելացնելու համար վրաց հերոսական պատմության էջերի վրա, և ԳԵՂԵՑԻԿ ՎՐԱՍՏԱՆԻՆ՝ է՛լ ավելի ծաղկում և բարգավաճում, երկու հարևան և արյունակից ժողովուրդների և երկրների սիրո միության և փոխադարձ համագործակցության մեջ:

Կեցցե՛ Վրաստանը, կեցցե՛ վրաց ժողովուրդը, կեցցե՛ վրաց Եկեղեցին:

Թող է՛լ ավելի ամրապնդվի հայ և վրաց ժողովուրդների եղբայրական դաշինքը:

